

# ԵՐԿՐԱՇԱՐՄ - EARTHQUAKE IN TURKEY AND SYRIA

*Posted on February 10, 2023 by Keghart*



Category: [Opinions](#)



**Թուրքիայի մեջլիսի անդամ Կարո Փայլանն իր Facebook-յան էջում տեղեկացրել է, որ Հայաստանի փրկարարական խումբն արդեն ժամանել է Թուրքիա և սկսել է աշխատանքն Ադրյամանի մարզում: Ըստ տեղեկությունների՝ Հայաստանը 27 փրկարար է ուղարկել Թուրքիա, 29-ը՝ Սիրիա: Փրկարարական խմբերում ընդգրկված են բժիշկներ:**

*Republic of Armenia sent rescue teams to Turkey (27) and Syria (28) including physicians.*

**Յակոբ Զոլաքեան, [Yerepouni News](#), 7 Փետրուար 2023**

Պատմութեան մէջ հզօր երկրաշարժեր մեծ աւերներ գործած են այն նոյն շրջանակին մէջ, ուր երէկ երկրաշարժ պատահեցաւ, պատմական Սուրիոյ հիւսիս-արեւմտեան կողմերը: Այդ երկրաշարժերը կը յիշատակուին Անտիոքի եւ Հալէպի, անուններով: Յոյն ժամանակագիր Յովհաննես Մալամասի հաղորդումով ծանրագոյն աղետ էր 526 թուականին (յունաց 5200 թուականին) Անտիոքի ահաւոր երկրաշարժը, որ քարուքանդ կ'ընէր նաեւ ծովափնեայ քաղաքները ու կը խլէր 250 000 գոհ:

Պարբերական ցնցումներ յաճախ պատահած են այդ շրջանակին մէջ: Հայ մատենագիրներ եւս կը յիշատակեն անոնց մասին:

Ահաւոր եղած է Հալէպի 1822-ի երկրաշարժը: Ցնցումները սկսած են 5 Օգոստոսէն: Մեծագոյն ցնցումը եղած է 13 Օգոստոսին եւ տեւած 40 երկվայրեան: Յետընթաց ցնցումներ պատահած են յաջորդ երկուքուկէս տարիներու ընթացքին: Հալէպի այս երկրաշարժը ծանրօրէն հարուածած է նաեւ Այնթապն ու Քիլիսը, Ճսրը Շուղուրը, Իտլէպն ու Անտիոքը, ամբողջ ծովափնեայ շրջանները: Ճսրը Շուղուրի մօտիկ հայկական Գնիէ գիւղի աղբիւրին վերանորոգութեան վիճագիր արձանագրութիւնը կը վաւերագրէ այս մեծ շարժը. ԹԻԻ ՇԱ/ՐԺԻՆ./ՀՃ. 1238' (1822) ԵՂԵԻ ՊԱՏՃԱՌ / ՆՈՐՈԳՄԱՆ ԱՂԲԻ / ԻՐՍ ՇԵՄ ԻՍԱՆ / ԱՐԴԻԱՄԲ ՏՐ. ՕՎԱՆԷ / ՍԻՆ:

Քանդիչ էր նաեւ Անտիոքի 1872-ի երկրաշարժը: Քաղաքէն դուրս մեծ աւերներ կը պատահին նաեւ 38 գիւղերու մէջ, անոնց կարգին նաեւ Մուսա Լեռան եւ Քեսապի գիւղերուն մէջ: Ատիկա հայ բնակչութեան յիշողութեան մէջ կը մնայ " ժածը տերէն"՝ շարժի տարին անունով: Մարիամ Սարամազեանը , Քեսապի շրջանի Վերի Պաղճաղագ գիւղէն կը պատմէ հետեւեալը. «Իմ առաջին յիշողութիւնս կու գայ 1872-էն: Ատիկա այն տարին էր, երբ ամբողջ Անտիոքը աւերակ դարձաւ երկրաշարժէն, որ մեր կողմերն ալ ցնցեց: Կը յիշեմ, մեր տունէն քիչ հեռու հարթավայրի մը մէջ վրան զարկինք եւ երկու-երեք շաբաթ հոն ապրեցանք: Ոտքիս վրայ վերք բացուած էր: Մեծ մայրս զիս դուրս չէր հաներ: Ես միւս մանուկներուն պէս դուրս ելլել եւ երկրաշարժէն շարժող ծառերը եւ լեռներէն գլորուող ժայռերը դիտել կ'ուզէի: Օր մը եղբայրս լեռնէն գալով մեզի պատմեց, թէ երկրաշարժը ինչ աւերներ գործեր էր, հսկայական ժայռեր գլորեր եւ ծառերը տապալեր էր: Կը յիշեմ անոր պատմածը: Այդ ատեն հաւանաբար 4-5 տարեկան ըլլալու էի»:

Գիտությունը տակալին շատ անգոր կը մնայ բնական աղետներուն առջեւ: Մաղթենք, որ պատերազմի համար մարդու ստեղծած զենքերու փոխարեն՝ բոլորը մտածեն այսպիսի աղետները սանձելու մասին: “Աստուած պահապան” ըսենք:

**There are no comments yet.**